ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

4 ապրիլի 2014 թվականի N 16-Ա

ԹԱԴԵՎՈՍ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2.2 կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2014 թվականի ապրիլի 2-ի N 5 որոշումը և եզրակացությունը, Թադևոս Ղազարյանի անձնական դիմումը՝ **կ ա ր գ ա դ ր ու մ եմ.**

Թադևոս Ղազարյանին 2014թ. ապրիլի 4-ից, նշանակել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի (68-2.1-1) պաշտոնում, դադարեցնելով նրա հետ 2013թ. հոկտեմբերի 22-ին կնքված N 19 ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Աշխատավարձը՝ համաձայն պաշտոնային դրույքաչափի:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ***Վ. ՀԱԿՈԲՅԱՆ***

2014թ. ապրիլի 4
ք. Կապան